ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Նոր-Նախիջևանցի Պ. Խաչատուր Սրապիոնեան Քէչէճեանց ի Նպաստ Նորոգութեան մայր տաճարի ուղարկել էր յանուն Վեհափառ Կաթողիկոսի 300 ռուբ. Նորին Վեհափառութիւնն նոյն գումարը յանձնել է Սինոդին՝ պատուիրելով տնօրինել զարժանն.

Նոյնպէս Նոր—Նախիջևանցի մեծապատիւ պարոն Յովհաննէս Մկրտչեան Պապասինեան գալով ի Մայր Աթոռս՝ ի Նպաստ վերանորոգութեան Մայր տաճարի՝ նուիրեց երեք հարիւր ռուբլի.

Ալէքսանդրապոլցի աստիճանաւոր Մկրտիչ Կոստանեան իւր հարազատ եղբօր Յովհաննէսի հանգուցեալ կնոջ Եղիսաբէթի Մահտեսի Մկրաչեան Բարայեանց նուիրել է 25 ռուբլի ի հոգեբաժին. Ալէքսանդրոպոլի օրիորդական դպրոցին՝ մի հարիւր ռուբլի՝ որ տոկոսիքովը մի աղքատ օրդեգրուհի սովորի. յիսուն ռուբլի ևս Աղքատանոցին.

Աստուած ի հաճոյս ընդունելով յիշեալ պարոնների նուէրը վարձատրէ նոցա ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ.

—

Վեհափառ Հայրապետի հաճութեամբ Տփխիսից ի Մայր Աթոռս հրաւիրուեց ճարտարապետ Պ. Սիմենսօն. որ քննելով տաճարի արդի դրութիւնը ներքուստ և արտաքուստ. վերանորոգութեան նախագիծը և նախահաշիւը պատրաստեց. Հետևեալ ամսատետրակում ի լուր հասարակաց կը հանենք յիշեալ մեծարգոյ ճարտարապետի նկատողութիւնքը և նախահաշիւը.

Կ. ՊՕԼՍՈՑ ՁԱՑՆ.

(ՓոՀԼ.)

Գրէնկեան Յակոբ էֆէնտիի լծակից տիկին Երանուհի Պատարագի համար ձեռք մը քահանայական զգեստ. ճոխ և ճարտարահիւս. նուիրեր է Պոյաճը գիւղի նորակառոյց եկեղեցւոյ. Յակոբ էֆէնտի ալ՝ որ փոխատուութեամբ ու նուիրատուութեամբ նպաստած է սոյն եկեղեցւոյն շինութեան ժամանակ. այժմ ևս կը նպաստէ ներքին պիտոյից ու սպասուց համար.

—

Հալէպի առաջնորդական տեղապահ կարգեցաւ Կրօնական ժողովոյ անդամ Տ. Մաղաքիա վարդապետ Տէրունեան.

—

Խառն ժողովն անբաւական գտնելով Խարբերդի և Գաղատիոյ գաւառական ժողովոց կազմութեան և առաջնորդական ընտրութեանց տեղեկագրերն. որոշեր է բացատրութիւն ուղել.

—

Կրօնական ժողովն հրաւիրելով Ռուբինեան Տ. Ամբրոսիոս վարդապետը. պատուիրեց մատուցանել երկրագործական վարժարանի համար ըրած հանգանակութեանց հաշիւներն և պաշտօնական գրութիւնները. Տարիներ կանցնին. ժողովներ կուգան կերթան. և դեռ կը մնայ այս հաշուոց խնդիրն.

—

«Մամուլ» խափանեալ զաւեշտաթերթի արտօնատէր Գէորգ Էֆէնտի Այվազեան, որոյ ներման շնորհ ստանալը ծանուցած եմք, երկուշաբթի մայրաքաղաքս վերադարձաւ իւր միակ որդեկին հետ, և ուղղակի առ Ս. Պատրիարք Հայրն երթալով՝ շնորհակալութիւն յայտնեց Նորին Սրբազնութեան ջանից համար։ Միտիլիի կառավարիչն և վարչական ժողովը Այվազեան Էֆէնտիի պարկեշտ ու հանդարտ կենցաղավարութեան համար վկայագիր մը տուեր են։ Կղզուն Ցունաց Մետրապոլիտն՝ որ բարերարած է Այվազեան Էֆէնտիի, նորա և որդւոյն ճանապարհի ծախքն ալ վճարեր է։

—

Ռնիկ Կարնեցի, և ապա ի Սիլեկիա բնակեալ Սէրովբէեան Մ. Գրիգոր անուն ազգային մը երկու տարիէ հետէ անյայտ եղած է։ Սորա ո՛ւր, ողջ կամ մեռեալ լինելուն վրայ ծանօթութիւն ունեցողները կը հրաւիրուին՝ անյապաղ իմացնել Պատրիարքարանի։

—

Գեր. Տ. Մովսէս Ծ. վարդապետ Կէօմրիւրճեան մայրաքաղաքս դարձաւ Բաղէշէն. հրաժարելով Զմշկածագի հովուական պաշտօնէն։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 29 Հոկտ. ընդ համարաւ 642 հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Բագուաբնակ հայազգի ժողովրդոց Շամախւոյ պատուելիք՝ Համբարձում-բէկն Իւզբաշեանց, Մովսէս-բէկն Սարուխեանց և Հայրապետն Քօչարեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 6 Նոյեմբ. ընդ համարաւ 657 հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական-ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Ս. Երրորդութեան եկեղեցւոյ Հայոց Ներքին-Ագուլեաց բարեկրօն Ցակոբ քահանայն Տէր Անդրէասեանց և պատուելիք երեցփոխան Պօղոսն Աղամալեանց և Մինասն Նունուսեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 6 Նոյեմբ. ընդ համարաւ 658 հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական-ծխական միդասեան աղջկանաց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Մեծ-Ղարաքիլիսա գեղջ բարեկրօն Խորէն քահանայն Խանդամեանց և պատուելիք երեցփոխան Առտուածատուրն Գէորգեան և Սօսն Արսէնեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 6 Նոյեմբ. ընդ համարաւ 659 հաստատեցան ի հոգաբարձական պաշտաման եկեղեցական-ծխական միդասեան Օրիորդական ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց